ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի դեկտեմբերի 11-13-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը
   Գեորգի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. Գործուղման վայրը / ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2018 թվականի դեկտեմբերի 11-13-ը

4. Հրավիրող կողմը
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով
   Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության միջև փոխըմբռնման հուշագրի» իրականացման շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ կազմակերպված հանդիպմանը՝ մասնագիտական փորձի փոխանակման, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների միջև համագործացության եզրերի և հետագա համատեղ ծրագրերի քննարկման նպատակով:

6. Քննարկված թեմաները

- Կենդանիների հատուկ վտանգավոր ախտածին հիվանդությունների դեմ պայքարը, ինչպես նաև զոոնոզ հիվանդությունների արդիականությունը,
- անասնաբուժական ծառայությունների ներուժի զարգացումը,
- խոզերի աֆրիկյան ժանտախտի, դաբաղի, մանր եղջերավոր կենդանիների ժանտախտի պայքարի միջոցները,
- ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում ընթացիկ էպիզոտիկ իրավիճակը,
- ինչպես նաև, 2018-2020թթ. եռամյա ժամանակահատվածում Հուշագրի շրջանակներում իրականացվող Պիլոտային ծրագրի միջոցառումների կազմակերպման հետ կապված տարբեր այլ կարևոր հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացել են ֆորմալ և ոչ ֆորմալ քննարկումներ և հանդիպումներ՝ բարձրաստիճան մասնակից ներկայացուցիչների հետ, այդ թվում. Տեխնիկական կանոնակարգման հարցերով Կոլեգիայի անդամ (Նախարար) Վիկտոր Նազարենկոյի, արդյունաբերության և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով Կոլեգիայի անդամ (Նախարար) Ալեքսանդր Սուբբոտինի, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության փորձագետների և այլ ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Եղել են քննարկումներ, առաջարկներ և որոշում՝ ավելի հաճախակի նմանօրինակ հանդիպումներ և քննարկումներ անցկացնելու, ինչպես նաև, անասանբուժության ոլորտում փորձի փոխանակման և համագործակցության հարթակ ստեղծելու վերաբերյալ:

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ներկայացվել է առաջարկ՝ Հայաստանում նմանօրինակ հաջորդիվ հանդիպում անցկացնելու վերաբերյալ, որը սակայն ենթակա է հետագա քննարկման:

Ըստ նախնական պայմանավորվածությունների՝ առաջիկա նմանօրինակ հանդիպումը արդեն իսկ նախատեսված է անցկացնել Ղազախստանի Հանրապետությունում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

18 դեկտեմբեր 2018թ.